ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/60/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 24 փետրվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի փետրվարի 24-ին քննելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավար Էդգար Էդիկի Արշակյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ 2025 թվականի փետրվարի 13-ի թիվ ՎԻՎ/60/2025 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

ՊԱՐԶԵՑ

Ի. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված գործառույթների իրականացման

շրջանակներում հիմք ընդունելով «Hetq.am» լրատվականի՝ «Տաշիրի համայնքապետի տեղակալի կնոջ ԱՁ-ի հետ համայնքապետարանը կնքել է 5,9 մլն դրամի պայմանագրեր» վերտառությամբ հրապարակումը[1] և ղեկավարվելով Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի 1-ին մասով, իրականացրել է հրապարակմամբ ներկայացված տեղեկատվության հիման վրա վեր հանված Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավար Էդգար Արշակյանի կողմից դրսևորված առերևույթ խախտմանն առնչվող նյութերի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզել է.

1.2 2024 թվականի հուլիսի 25-ին, Տաշիր համայնքի ղեկավար Էդգար Արշակյանը, իր հետ փոխկապակցված անձ՝ նույն համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Նորայր Բաղդասարյանի հետ անձնական հարաբերություններ ունեցող անձի՝ կնոջ՝ «Անետա Շահբազյան» ԱՁ-ի հետ կնքել է Տաշիր և Լեռնահովիտ բնակավայրերի փողոցների նշագծման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր (N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-24/85):

1.3 Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել նաև, որ վերոնշյալ պայմանագիրը կնքելուց առաջ Էդգար Արշակյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով Հանձնաժողով չի ներկայացվել դրա կնքման փաստի վերաբերյալ հայտարարություն՝ այդ կերպ թույլ տալով Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի առերևույթ խախտում:

1.4 Հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 13-ի թիվ ՎԻՎ/60/2025 որոշմամբ վերոնշյալ առերևույթ խախտման հիմքով հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

1.5 Հանձնաժողովը 2025 թվականի փետրվարի 13-ին Էդգար Արշակյանին հասցեագրել է թիվ 01/676-2025 գրությունը՝ կից ներկայացնելով թիվ ՎԻՎ/60/2025 Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը, միաժամանակ հրավիրելով անձամբ կամ ներկայացուցչի միջոցով 2025 թվականի փետրվարի 20-ին ժամը՝ 16:00-ին մասնակցելու Օրենսգրքի 169.31-ին հոդվածի 1-ին մասով

[1] https://www.hetq.am/hy/article/169148

նախատեսված առերևույթ վարչական իրավախախտման հիմքով արձանագրության կազմմանը, ինչպես նաև 2025 թվականի փետրվարի 24-ին ժամը՝ 16:00-ին վերաբերելի նյութերի հիման վրա իրականացվող գործի քննությանը:

1.6 Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման օրը՝ 2025 թվականի փետրվարի 20-ին, Էդգար Էդիկի Արշակյանը ներկայացրել է դիրքորոշում և միջնորդություն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը իր բացակայությամբ կազմելու վերաբերյալ:

1.7 2025 թվականի փետրվարի 20-ին պատշաճ ծանուցված Էդգար Արշակյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 25/2025 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.8 Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/60/2025 գործի քննությունը նշանակվել է 2025 թվականի փետրվարի 24-ին, ժամը՝ 16:00-ին, ինչի կապակցությամբ վարույթի մասնակիցը պատշաճ ծանուցվել է (հիմք՝ ALO126606973AM ծանուցագիր):

1.9 2025 թվականի փետրվարի 24-ին գործը քննվել է պատշաճ ծանուցված վարույթի մասնակցի բացակայությամբ, գործի քննությունը հետաձգելու միջնորդություն չի ներկայացվել:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Արձանագրված առերևույթ իրավախախտման առնչությամբ 2025 թվականի փետրվարի 20-ին վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման օրը Էդգար Արշակյանի կողմից ներկայացվել է հետևյալ գրավոր դիրքորոշումը.

«(...) ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կողմից ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար, մասնավորապես՝ Տաշիր համայնքի և Լեռնահովիտ բնակավայրի փողոցների նշագծման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-24/85» ծածկագրով մրցույթ /մրցույթի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տես՝ http://gnumner.minfin.am/hy/search կայքէջում/:

Տաշիրի համայնքապետարանի «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-24/85» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գնումն իրականացրել է էլեկտրոնային եղանակով, ուստի անձնապես չի առնչվել որևէ մասնակցի հետ:

Օրենքով սահմանված կարգով՝ «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-24/85» ծածկագրով ընթացակարգի հայտերի ուսումնասիրման արդյունքում արձանագրվել է, որ հայտ է ներկայացրել «ԱՁ Անետա Շահբազյան»-ը՝ համապատասխան գնային առաջարկով (2,945,000 /երկու միլիոն ինը հարյուր քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ), ինչի վերաբերյալ կազմվել է հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությունը:

Գնահատող հանձնաժողովը հետամուտ չի եղել գնումների ընթացակարգով հաղթող ճանաչված «ԱՁ Անետա Շահբազյան»-ին նույնականացնելուն:

Օրենքով սահմանված կարգով՝ գնահատող հանձնաժողովը ինձ է ներկայացրել նիստերի արձանագրությունները և շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը: Ուսումնասիրելով ներկայացրած նյութերը, շահերի բախում չտեսնելով՝ ընդունել եմ «ԱՁ Անետա Շահբազյան»-ի հետ աշխատանքների ձեռքբերման պայմանագիր կնքելու որոշում:

«ԱՁ Անետա Շահբազյան»-ի և Տաշիրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Նորայր Բաղդասարյանի միջև անձնական կապի վերաբերյալ տեղեկացել եմ միայն սույն վարչական վարույթի շրջանակներում: Քանի որ համայնքապետարանի աշխատակիցների միջև զուտ գործնական հարաբերություններ են, գրեթե անհնարին է եղել Անետա Շահբազյան անհատական տվյալներով անձի և Նորայր Բաղդասարյանի միմյանց հետ փոխկապակցված լինելու հանգամանքը պարզել, նամանավանդ տարբեր ազգանունների առկայության դեպքում նույնիսկ մեծ ուշադրության և հետևողականության պայմաններում չէր կարող այդ հանգամանքը բացահայտել:

Նշված վարչական վարույթի շրջանակներում նշված զանցանքը կարող է կատարվել միմիայն դիտավորությամբ, հետևաբար, եթե անգամ տեսականորեն պատկերացնենք, որ ես՝ որպես համայնքի ղեկավար, թերացել եմ և չեմ բացահայտել շահերի բախման հանգամանքը (ինչը պետք է աներ գնման հանձնաժողովը և նոր միայն ինձ ներկայացներ հայտարարություն շահերի բախման բացակայության մասին), ապա դա իմ կողմից անփութության դրսևորում է, իմ վարքագիծը զանցանք չի համարվում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շահերի բախման առկայությունը վնասում է համայնքապետարանի նկատմամբ հասարակության վստահությանը՝ Տաշիրի համայնքապետարանը այսուհետ ձեռնարկելու է քայլեր՝ իրավիճակը իրավական կարգավորմանը համապատասխանեցնելու համար և մեխանիզմներ է կիրառելու՝ հետագա գնումների գործընթացի մասնակիցների նույնականացումն ավելի արդյունավետ իրականացնելու համար:

Հայաստանի Հանրապետության 29.03.2018թ.-ի «Հանրային ծառայության մասին» օրենքը հստակ սահմանելով շահերի բախումը, համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի և նրա հետ առնչություն ունեցող անձանց, վերջիններիս հետ փոխկապակցված անձանց շրջանակը, հստակ սահմանում չի տվել վերջիններիս բացահայտման մեխանիզմների վերաբերյալ: ՀՀ Սահմանադրական դատարանը՝ իր ՍԴՈ-1488 որոշմամբ արձանագրել է նաև՝ իրավական որոշակիությունը նաև իրավական անվտանգության կարևոր բաղադրիչ է, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև վստահությունը հանրային իշխանության և նրա հաստատությունների նկատմամբ: Նման իրավակարգավորումների որոշակիության դեպքում միայն ես կարող էի խուսափել նշված վարույթի շրջանակներում նման վարքագծի դրսևորումից:»:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/60/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Տաշիրի համայնքապետարանի պաշտոնական կայքէջում (https://www.tashircity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=6f694e64-e3ed-42d0-8cdb-dc0679c0bea1) հրապարակված տվյալների համաձայն՝ Էդգար Էդիկի Արշակյանը 2022 թվականի հոկտեմբերի 15-ից մինչ օրս զբաղեցնում է Տաշիր խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնը:

3.2 Հայտարարագրման համակարգի տվյալների համաձայն՝ Նորայր Բաղդասարյանը 2022 թվականի նոյեմբերի 11-ից մինչ օրս հանդիսանում է Տաշիր համայնքի ավագանու անդամ:

3.3 Տաշիր համայնքի ավագանու՝ **2022 թվականի դեկտեմբերի 28-ի** թիվ 45-Ա որոշմամբ Նորայր Բաղդասարյանը նշանակվել է Տաշիր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ:

3.3 Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջում (https://www.elections.am/Elections/LocalProportional/27733) հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 2022 թվականի սեպտեմբերի 25-ին կայացած Տաշիր համայնքի ավագանու ընտրություններում Էդգար Արշակյանը և Նորայր Բաղդասարյանն ընդգրկված են եղել «Միասնական համայնք» դաշինքի ընտրական ցուցակում:

3.4 Նորայր Բաղդասարյանի 2023 թվականի տարեկան հայտարարագրի և ՔԿԱԳ տեղեկատվական շտեմարանի տվյալների համաձայն՝ Անետա Շահբազյանը հանդիսանում է վերջինիս կինը:

3.5 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Անետա Շահբազյանը 2012 թվականի հունվարի 12-ից հաշվառված է որպես ԱՁ՝ ՀՎՀՀ 67058155:

3.6 Armeps գնումների համակարգի տվյալների համաձայն՝ 2024 թվականի հուլիսի 25-ին Տաշիր համայնքի ղեկավար Էդգար Արշակյանը, իր հետ փոխկապակցված անձ՝ նույն համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Նորայր Բաղդասարյանի հետ անձնական հարաբերություններ ունեցող անձի՝ կնոջ՝ «Անետա Շահբազյան» ԱՁ-ի հետ կնքել է Տաշիր և Լեռնահովիտ բնակավայրերի փողոցների նշագծման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր (N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-24/85):

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է հանրային իշխանության մարմինների վրա, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա:

4.2 Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային:

4.3 Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորման համաձայն՝ համայնքի ղեկավարի պաշտոնը հանդիսանում է **համայնքային քաղաքական պաշտոն**:

4.4 Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

4.5 Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ (…):

4.6 Նույն հոդվածի 11-րդ մասը կարգավորում է փոխկապակցված անձանց շրջանակը, որի 2-րդ կետի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով՝ փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի հետ ազգակցական և **ոչ ազգակցական սերտ անձնական հարաբերություններ ունեցող անձինք**, այդ թվում՝ համատեղ բնակվող անձինք, փաստացի խնամքի տակ գտնվող անձինք, ընդհանուր տնտեսական շահ ունեցող անձինք:

4.7 Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման իրավիճակի առաջացումից**, **ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց** կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման կայացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներին (փաստաթղթերի նախագծերի կազմում, քննարկումների կազմակերպում, որոշման վրա ազդեցություն ունեցող հանձնախմբերի ձևավորում և այլն) մասնակցելուց կամ այլ կերպ որոշման կայացման գործընթացին մասնակցելուց:

4.8 Նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը (անգործությունը) կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, **ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է 10-օրյա ժամկետում** իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին ներկայացնել գրավոր

հայտարարություն **շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին**, որը ենթակա է քննարկման անհապաղ:

4.9 Նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ **քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում պարտավոր է այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով**, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ:

4.10 Նույն հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունը կամ **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությունը ստանալն անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց** կամ որոշում կայացնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ՝ այդ մասին տեղեկացնելով վարույթի մասնակիցներին, իր վերադասին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադաս կամ անմիջական ղեկավար չունենալու դեպքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

4.11 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված է գնումների գործընթացի կազմակերպման կարգը (**այսուհետ՝ Կարգ**), որի 4-րդ կետով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ 1) գնումների պլանավորում, 2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը), 3) **պայմանագրի կնքում**, 4) պայմանագրի կատարում և կառավարում, Կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ պատվիրատուի ղեկավարը՝ **տեղական ինքնակառավարման մարմիններում՝ համայնքի ղեկավարն է կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձն է**, Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության

համաձայն՝ **պատվիրատուի ղեկավարը**, ի թիվս այլ գործառույթների, **կնքում է պայմանագիրը**:

4.12 «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

4.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և **շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը**:

4.14 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.15 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.16 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ **իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:**

4.17 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.31-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.18 Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ **քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելը**՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

4.19 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.20 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, ***այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:***

4.21 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ *վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման* նույն հոդվածի 1-ին կետով սահամված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման*** *դեպքի* կամ **կազմի *բացակայությունը***:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ ***իրավախախտան կազմը բացակայում*** է հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, (...) քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, ***մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ)*** այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

Օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտումը համարվում է անզգուշությամբ կատարված, եթե այն կատարած անձը կանխատեսել է իր գործողության կամ անգործության վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց թեթևամտորեն հույս է ունեցել կանխելու դրանք կամ չի կանխատեսել այդպիսի հետևանքներ առաջանալու հնարավորությունները, թեև պարտավոր էր և կարող էր կանխատեսել դրանք:

Օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է, արդյոք, վարչական իրավախախտում, արդյոք, ***տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ. արդյոք, նա ենթակա է վարչական պատասխանատվության*** (...):

Մատնանշված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ վարչական պատասխանատվության ոլորտում գործում են «ըստ մեղքի պատասխանատվության» կարևորագույն սկզբունքը:

Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի էությունն այն է, որ անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ զանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը (դիտավորություն կամ անզգուշություն) հաստատված է իրավասու մարմնի կողմից, քանի որ անձի արարքում մեղքի բացակայությունը վկայում է վարչական իրավախախտման բացակայության մասին:

Նմանատիպ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանը 12.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-920 որոշմամբ՝ նշելով, որ վարչական

պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ:

Սույն գործով Հանձնաժողովն արձանագրում է, որ, համաձայն Էդգար Էդիկի Արշակյանի կողմից ներկայացված պարզաբանման, «ԱՁ Անետա Շահբազյան»-ի և Տաշիրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Նորայր Բաղդասարյանի միջև անձնական կապի վերաբերյալ Էդգար Արշակյանը տեղեկացել է միայն սույն վարչական վարույթի շրջանակներում: Էդգար Արշակյանը նշել է, որ Տաշիրի համայնքապետարանի աշխատակիցների միջև զուտ գործնական հարաբերություններ են, և գրեթե անհնարին է եղել «Անետա Շահբազյան» անհատական տվյալներով անձի և համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Բաղդասարյանի՝ միմյանց հետ փոխկապակցված լինելու հանգամանքը պարզել, նամանավանդ տարբեր ազգանունների առկայության դեպքում նույնիսկ մեծ ուշադրության և հետևողականության պայմաններում չէր կարող այդ հանգամանքը բացահայտել:

Նշվածի կապակցությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ մեղքը մեղավոր գործողություն կամ անգործություն է, այդ թվում նաև՝ անզգուշության ձևով, այն է՝ անձը պետք է կանխատեսի վնասակար հետևանքները կամ պարտավոր լինի և կարող լինի կանխատեսել դրանք:

Տվյալ դեպքում Հանձնաժողովն էական է գնահատում այն հանգամանքը, որ «Անետա Շահբազյան» ԱՁ-ի և Նորայր Բաղդասարյանի միջև անձնական կապի վերաբերյալ տվյալներն, ըստ էության, այն տվյալներն են, որոնք հասանելի չեն եղել համայնքի ղեկավարի համար իր համար հասանելի բաց աղբյուրում, ինչի պայմաններում բացակայել է նաև Էդգար Արշակյանի կողմից «Անետա Շահբազյան» ԱՁ-ի և Նորայր Բաղդասարյանի միջև անձնական կապի վերաբերյալ ***փաստացի տեղեկացվածությունը, ուստիև Էդգար Արշակյանը չի կարող վարչական պատասխանատվության ենթարկվել մեղքի բացակայության պայմաններում:***

Վերոնշյալով պայմանավորված՝ տվյալ դեպքում հաստատվում է, որ թեև Էդգար Արշակյանի կողմից Հանձնաժողով չի ներկայացվել 2024 թվականի հուլիսի 25-ին «Անետա Շահբազյան» ԱՁ-ի հետ Լեռնահովիտ բնակավայրերի փողոցների նշագծման աշխատանքների ձեռքբերման գնման թիվ N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-24/85 պայմանագիրը

կնքելուց առաջ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված հայտարարություն, այնուամենայնիվ, այդ արարքում բացակայում է նրա մեղքը (անզգուշությունը), քանի որ Էդգար Արշակյանը, փաստացի տեղեկացված չլինելով «Անետա Շահբազյան» ԱՁ-ի և Նորայր Բաղդասարյանի միջև անձնական կապի մասին, չէր կարող ու պարտավոր չէր կանխատեսել թիվ N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-24/85 պայմանագիրը կնքելուց առաջ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ Հանձնաժողով հայտարարություն ներկայացնելու հանգամանքը, ուստի նրա արարքում զանցակազմի պարտադիր տարր հանդիսացող մեղքը չի կարող համարվել հաստատված, ինչը բացառում է վարչական իրավախախտման առկայությունը, և, ըստ այդմ էլ, վարչական տույժի նշանակման իրավական հնարավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 247-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2025 թվականի փետրվարի 13-ին հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/60/2025 գործի վարույթը կարճել՝ իրավախախտման կազմի բացակայության հիմքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդգար Արշակյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ